

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՄԻՐԱՆՈՒՇ ՀՈՎԻԿԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՐՁԱՅԱՆ ՎԱՆԱՆԴԵՑՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

**Ժ.01.01- «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2022

Ատենախոսության թեման հաստատվել է ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր
Վարդան Գևորգի Դերիկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Պարզևի Մուրադյան

բանասիրական գիտությունների թեկնածու
Անուշ Գագիկի Ապրեսյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022 թ. դեկտեմբերի 23-ին, ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի Վիդուհի, 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. նոյեմբերի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու՝ **Ս. Ա. Մարգարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սույն ատենախոսությունը նվիրված է հայկական կլասիցիզմի նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ մշակութային գործիչ ու բանաստեղծ Հովհաննես Միրզայան Վանանդեցու (1772-1840) ստեղծագործությունների ընդհանուր վերլուծությանը:

Հովհաննես Միրզայան Վանանդեցու դերը մեզանում կլասիցիզմի հաստատման գործում ու ընդհանրապես հայ գրականության մեջ բավականին մեծ է:

Վանանդեցին գրել է պոեմներ, կրոնական գրվածքներ: Հեղինակել է «Հայաստան, Երկիր դրախտավայր» տողով սկսվող «Առ Հայաստան» բանաստեղծությունը:

Վանանդեցու գլխավոր ստեղծագործությունները երեք մեծածավալ պոեմներն են՝ «Արփիական Հայաստանի» (Կ. Պոլիս, 1836), «Ոսկի դար Հայաստանի» (Զմյուռնիա, 1841), «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» (Զմյուռնիա, 1856):

Վանանդեցու երեք մեծածավալ պոեմները պայմանականորեն կարելի է պոեմ անվանել, որովհետև վիպական ընթացք, սյուժետային զարգացում և կերպարներ չունեն: Ավելի նպատակահարմար է վերջիններիս ներքող անվանումը տալ, որոնցում ներբողվում են տվյալ ժամանակը և պատմական անձնավորությունները:

Հայրենասիրությունն ու ազգասիրությունն են Վանանդեցու գլխավոր ստեղծագործությունների գաղափարական հիմքը, ուժի, հավատքի ու ազգության պաշտամունքը, հետո արդեն՝ այդ գաղափարների ժառանգորդությունը, դրանցով հայ պարմանիներին ու պարմանուհիներին կրթելն ու դաստիարակելը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության **առարկան** հայ դասական գրականության պատմության մեջ կարևոր տեղ զբաղեցրած կլասիցիզմի գրականության տեսական մի քանի հարցերի քննությունն է, նրա խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ Հովհաննես Վանանդեցու ստեղծագործության առանձնահատկությունների, նրա անցած ճանապարհի, ստեղծագործական հետազոծի գիտական արժևորումն ու ամբողջական ուսումնասիրությունը: Այս աշխատության **խնդիրն է**, շրջանառության մեջ դնելով Հովհաննես Վանանդեցու վերաբերյալ տեսական ու քննադատական ողջ նյութը, ստեղծել նրա կյանքի և գործի վերաբերյալ ամբողջական, համապարփակ ուսումնասիրություն:

Թեմայի ընտրության և ուսումնասիրության հարցում հիմնականում դեր են ունեցել հետևյալ հանգամանքները՝

- Խոսելով հայ կլասիցիստական գրականության մասին՝ ներկայացնել նրա խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական ստեղծագործության համապարփակ վերլուծությունը,
- Հովհաննես Վանանդեցու ստեղծագործության քննությամբ ներկայացնել հայ կլասիցիստական գրականության ազգային առանձնահատկությունները, ցույց տալ, թե ինչ գրական ավանդույթ է ձևավորել գրական այս ուղղությունը՝ կապված ստեղծագործական պոետիկայի, գրական չափանիշների և գաղափարական-աշխարհայացքային հղումների հետ:

Հենց այս հարցադրումների իմաստով նկատում ենք, որ թեև Վանանդեցու կապն անմիջական չէր Մխիթարյանների հետ, բայց աշխարհայեցողությամբ, գրական-ստեղծագործական սկզբունքների ընդհանրությամբ նա կրողն էր Մխիթարյանների պատմամշակութային աշխարհայացքի, գեղագիտական ըմբռնումների և ազգային գաղափարաբանության: Վանանդեցու ստեղծագործությունն էլ, Մխիթարյանների նման, անտարակուսելիորեն կապված էր հայ ազգային կյանքին ու նրա խնդիրներին, սերտ առնչություններ ուներ պատմության ճակատագրական փորձությունների ենթարկված ժողովրդի պատմաքաղաքական, սոցիալ-հոգեբանական տագնապահարույց խնդիրների ու գոյութենական հեռանկարի հետ: Նրա ստեղծագործական ելակետը գրեթե նույնական էր Մխիթարյան հայրերի գաղափարական ու փիլիսոփայական աշխարհատեսության հետ՝ հայրենիքը, նրա փառավոր անցյալն ու անփառունակ ներկան, որ ուներ ազգային գիտակցության, ինքնաճանաչողության ու միասնության գաղափարները նորոգելու նպատակներ:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի արդիականությունը ամենից առաջ պայմանավորված է այն խոր հետաքրքրությամբ, որ վերջին ժամանակներս վերստին ցուցաբերվում է հայոց պատմության, դրա ճակատագրական շրջափուլերի, մշակույթի, գրականության միջոցով հայրենիքի տեսլականի իրացման ու հայրենասիրության հետ կապակցվող արժեհամակարգի հետ: Այս իմաստով կլասիցիզմի գրականության, նրա գեղագիտության, բերած իդեալների և գաղափարների, կլասիցիզմի խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ Վանանդեցու գրական ժառանգության ուսումնասիրությունը, որ ուղղակիորեն առնչվում է այս աշխարհայեցողայինը, այսօր **արդիական** է բոլոր առումներով:

Պայմանավորված հայկական իրականության չարաղետ վիճակով, Արևմտյան և Արևելյան Հայաստանների բաժանման ու ազգային և սոցիալական վիճակի՝ օրըստօրե վատթարացման հանգամանքով՝ հայ մտավոր կյանքը բուն

Հայաստանից դուրս էր զարգանում, և կլասիցիզմը որպես գրական և աշխարհայացքային համակարգ հայ իրականության մեջ առաջին հերթին կապվում է Մխիթարյանների գործունեության հետ:

Մխիթարյանների գիտական ու գրական ավանդույթն ամենայն մանրամասնությամբ քննության է առնվել հայ գրականագետների կողմից՝ ստեղծելով մի մեծ գրաքննադատական ժառանգություն, որն այսօր էլ նոր ու գիտականորեն հիմնավոր էջերով է ավելանում՝ կապված Մխիթարյան միաբանության 300-ամյակի, Մխիթարյան հայրերի գիտագրական ժառանգության նոր ընթերցումների հետ:

Ճիշտ է, մշակութային գործիչ ու բանաստեղծ Հովհաննես Միրզայան Վանանդեցին Մխիթարյան դպրոցի ներկայացուցիչ չէ, ապրել և ստեղծագործական գործունեություն է ծավալել Ջմյուռնիայում, սակայն հայկական կլասիցիզմի գեղագիտությունն ու թեմատիկան իրենց ամբողջական արտահայտությունն են գտել նրա ստեղծագործություններում՝ ի մասնավորի պատմական պոեմներում, որոնք գրված են խրթին, արհեստական գրաբարով ու ծանր տաղաչափությամբ և ժամանակագրորեն ընդգրկում են Հայկ Նահապետից մինչև 5-րդ դարը հասնող դեպքերը: Հայ դասական գրականության պատմության մեջ քիչ են անդրադարձել Վանանդեցու ամբողջական ստեղծագործությանը, գրեթե չեն քննարկվել այն խնդիրները, որոնք սույն ատենախոսության հիմնահարցերն են: Վանանդեցու ստեղծագործության խորքային, բազմապլան քննությունն այսօր կարևոր է՝ լրացնելու համար հայ գրականագիտության այդ բաց օղակը, բացահայտելու բանաստեղծության այս տեսակը՝ անդրադառնալով նրա պոետիկային, գաղափարական-աշխարհայացքային միջուկին, գեղարվեստական հնարանքների զինանոցին:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հովհաննես Վանանդեցու գրական ժառանգությանը հայ գրականագիտական միտքն անդրադարձել է առանձին գրական դիմանկարների, հոդվածների, գրախոսությունների և հայկական կլասիցիզմին վերաբերող ամենատարբեր գիտաքննական վերլուծությունների պարագայում¹: Վանանդեցուն առնչվող գիտաքննական նյութը քիչ չէ, բայց խորքային դիտարկումը ցույց է տալիս, որ բաց են մնացել բազմաթիվ խնդիրներ, հարցադրումներ, ուստի վաղուց առաջացել էր այդ բացը լրացնելու և

¹ Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1962: Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Դ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970: Տե՛ս **Զրբաշյան Ա.**, Հայկական կլասիցիզմի ժանրային համակարգը, Երևան, ԵՊՀ հրատ., 2009: Տե՛ս Հայոց գրականության պատմություն, հ. 3, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2015: Տե՛ս **Ասատրյան Ա.**, «Հովհան Միրզայան Վանանդեցու ձեռագրական ժառանգությունը», «Էջմիածին» հանդես, 2018, փետրվար, Բ: Տե՛ս **Մուրադյան Ս.**, Հայ նոր գրականության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2020:

խնդիրները նորովի, դասդասված ու ամբողջական քննելու անհրաժեշտություն: Մեր խնդիրն էր հավաքել և համակարգել հայ կլասիցիզմի խոշորագույն բանաստեղծ ու մշակութային գործիչ Վանանդեցուն առնչվող ամբողջ նյութը, անդրադառնալ ուշադրությունից դուրս մնացած հարցերին, տեսական ընդհանրացումներով ստեղծել նրա գրական ժամանակի և գրապատմական ժառանգության ամբողջական բնագիրը: Անշուշտ, Հովհաննես Վանանդեցու ստեղծագործություններին անդրադարձներ եղել են հայ գրականագիտության մեջ, բայց այս աշխատանքը, ըստ էության, առաջինն է՝ որպես հեղինակի գրական ժառանգությանը նվիրված ամփոփ հետազոտություն:

Սրանով է պայմանավորված ուսումնասիրության գիտական նորույթը:

ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ըստ մեր ատենախոսության գիտական խնդրադրության՝ օգտվել ենք գրական բնագրի վերլուծության կենսագրական, պատմահամեմատական, զուգադրական մեթոդների զինանոցից՝ երբեմն էլ դրսևորելով համալիր մոտեցում: Կատարվել է նաև կառուցվածքային վերլուծություն՝ յուրաքանչյուր ստեղծագործության բաժինների առանձին անդրադառնալով: Խնդրո առարկա բազմաթիվ փաստերի, տարընթերցումների և տրոհված, անհասկանալի բնագրային հատվածների ճշգրտման համար Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում նայել ենք Հովհաննես Միրզայան Վանանդեցու ստեղծագործությունների ինքնագիր և ընդօրինակված ձեռագրերը:

Ընտրելով հետազոտության համար առավել ընդունելի այս եղանակները, հետազոտվող խնդիրները դասդասել ու համակարգել ենք ժամանակագրորեն, թեմատիկ և գաղափարական ըմբռնումների միասնացված տիրույթում, որն էլ պայմանավորել է հետազոտության կառուցվածքը և շարադրանքի վերլուծական բնույթը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրությունը կատարվել է ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: Հովհաննես Միրզայան Վանանդեցու ստեղծագործական ժառանգության բոլոր մանրամասներին, դրանցում առկա տարընթերցումներին և բնագրագիտական՝ մինչ օրս աննկատ մնացած նրբություններին ծանոթանալու համար աշխատել ենք Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում՝ Վանանդեցու ձեռագրերի հետ:

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի **Հայ նոր գրականության պատմության** բաժնում:

Ատենախոսության տեսական դրույթները արտացոլվել են մեր՝ պարբերականներում հրատարակած հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է **ներածությունից, երեք գլուխներից,** ուսումնասիրության արդյունքներն ու տեսական եզրակացություններն ամփոփել ենք **Եզրակացություններ** բաժնում: Աշխատանքը, ըստ կարգի, ունի **Օգտագործված գրականության ցանկ:**

Գլխաբաժանումը կատարված է ըստ ստեղծագործությունների: Կատարվել է նաև կառուցվածքային վերլուծություն՝ յուրաքանչյուր ստեղծագործության բաժինների առանձին անդրադառնալով:

Ատենախոսության ծավալը՝ 156 համակարգչային էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացվում են ատենախոսության առարկան, հարցի պատմությունը, մշակվածության աստիճանը, հիմնավորվում են աշխատանքի կառուցվածքը, մեթոդական հիմքերը: Նշվում են աշխատանքի արդիականությունն ու գիտական նորոյթը: Ներածության մեջ հակիրճ տրվում են նաև Հովհաննես Վանանդեցու կենսագրությունը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑ ԴԱՐՁԻ ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ («ԱՐՓԻԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ»)

Ուսումնասիրության առաջին գլուխը, որ վերնագրված է ՀԱՅՈՑ ԴԱՐՁԻ ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ («ԱՐՓԻԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ»), քննության է առնում Հովհաննես Վանանդեցու «Արփիական Հայաստանի» ծավալուն պոեմը (տասը հազար տող), որ գրվել է 1829 թ., սակայն լույս է տեսել միայն 1836 թ. Կ. Պոլսում:

Շեռագրության ընթացքում փորձել ենք հասկանալ՝ ինչպես է պատմիչների գործերով վկայված բնագրային նյութը գեղարվեստորեն մարմնավորվել Վանանդեցու մեծածավալ պոեմում: Ըստ այդմ էլ, անդրադարձ է կատարվել այն հարցին, թե պոեմը գրելիս մատենագրական ինչ սկզբնաղբյուրներից է օգտվել Վանանդեցին և ինչպես է գեղարվեստորեն ներկայացրել դրանք, որի համար իրար հետ ենք համեմատել միջնադարյան համապատասխան հեղինակների երկերը և Վանանդեցու ստեղծագործության տվյալ հատվածները: Այդ կերպ երևում են Վանանդեցու՝ իր աղբյուրները օգտագործելու մոտեցումներն ու գեղարվեստականության աստիճանը:

Ավելին, այս գլխում բնագրագիտական աշխատանքով նշվում են գրական սկզբնաղբյուր ունեցող տողերը, որոնցում երևում են, թե որ դեպքում է բանաստեղծն արտահայտել իր զգացումները և հոգեվիճակը նկարագրվող

իրադարձությունների նկատմամբ՝ նկատի ունենալով դիտարկումը, որ «Անձնական քնարերգությունն առհասարակ կլասիցիզմի պոետիկայում երկրորդական տեղում էր դասվում, և պոեզիայի հիմնական արժանիքը համարվում էր քաղաքացիական պաթոսի առկայությունը, երևելի և մեծանուն մարդկանց դրվատումը»²:

Նման մոտեցմամբ սյուժետային առումով ցույց է տրվում, թե պոեմի զարգացման ընթացքը երբ է զուգահեռ գնում պատմիչների հաղորդած տեղեկություններին, և երբ է հեղինակն ավելացնում սյուժետային նոր գծեր ու դրվագներ:

Պոեմը կազմված է ութ գլխից, որոնք հեղինակն անվանել է երգեր:

Բացի կառուցվածքային ամբողջականությունից «Արփիականը» ունի նաև կուռ, տրամաբանական դիպաշար, որը, անկախ հեղինակի օգտագործած աղբյուրներից, ինքնուրույն զարգացում է ստանում:

Հովհաննես Վանանդեցին քաջածանոթ է եղել պատմիչների երկերին և պատմագիտական աշխատություններին (հատկապես Մ. Չամչյանի Պատմությանը), իր ներկայացրած ժամանակաշրջանի ու դեպքերի՝ հայ գրականության մեջ տեղ գտած գեղարվեստական արտահայտություններին:

Վանանդեցու «Արփիական Հայաստանի» պոեմը քրիստոնեության ընդունման և Հայոց դարձի պատմությունն է: Այն հյուսված է Գրիգոր Լուսավորչի կերպարի և Հայաստանում ծավալած քարոզչության պատմության շուրջ:

Հեղինակը բացառիկ մեծարանքով, ոգևորությամբ, մեծ սիրով և հավատով, տեղ-տեղ նաև ափսոսանքով ու սրտացավությամբ է խոսում Լուսավորչի մասին՝ թե՛ որպես գրական և թե՛ ներշնչանքի աղբյուր ունենալով և՛ Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունը», և՛ մասամբ նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

«Արփիական»-ի գլխավոր սկզբնաղբյուրը Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունն» է: Այն ուղեցույցի դեր է կատարում հեղինակի համար, չնայած նա մեխանիկորեն չի հետևում Ազաթանգեղոսի պատմության ընթացքին, ավելին՝ հաճախ իրադարձությունները ազատորեն տեղափոխում է՝ առաջ կամ հետ տանելով, որոշ դրվագներ ավելացնելով կամ չանդրադառնալով Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ հիշված տարբեր իրադարձությունների: Նա նույնիսկ սյուժետային մի քանի մեծ փոփոխություն է մտցրել: Այսպես, որոշ կարևորագույն հատվածներ ներկայացրել է միջնորդավորված, որպես դայակի պատմած: Այդպիսիք են Խոսրով Մեծի և Անակի միջև տեղի ունեցած դեպքերը (դավադրություն, սպանություն և այլն), Տրդատի փախուստը: Ապա Տրդատի քաջագործությունները կայսրին է ներկայացնում Լիկիանեսը, իսկ Հռիփսիմե կույսի և նրա ընկերուհիների չարչարանքների ու նահատակության մասին Գրիգորին պատմում է հրեշտակը

² Զրբաշյան Ա., Հայկական կլասիցիզմի ժանրային համակարգը, էջ 13:

Խոր վիրապում եղած ժամանակ: Այս փոփոխությունները դինամիկ են դարձրել պոեմը: Այսինքն, վերցնելով պատմական սկզբնաղբյուրը՝ հեղինակն իրեն ազատ է զգացել ինչ-ինչ դեպքերի մանրամասների նկարագրությունների մեջ:

Ազաթանգեղոսի հետևողությամբ՝ Վանանդեցու համար Սուրբ Գրիգորը մի աստվածը նտրյալ անձնավորություն էր, որ առաքել էր դարձի բերելու Հայաստան աշխարհը՝ այդ դժվարին ճանապարհին արիաբար անցնելով բազում փորձությունների միջով, բայց միևնույն ժամանակ անսասան պահելով երկնքից տրված զորությունը իր մեծ հավատքի, անշահախնդիր նվիրվածության և անկոտրում կամքի շնորհիվ: Պատահական չէ, որ նա իր տեղը գրավեց ոչ միայն Հայոց, այլև Ընդհանրական եկեղեցու սրբերի շարքում:

Պոեմի յուրաքանչյուր երգ ունի բացատրական բնույթի նախաբան: Հեղինակային նախաբաններն այդ ժամանակ լայն կիրառություն են ունեցել (այդպիսիք կան Արսեն Բագրատունու «Հայկ դիցազն» վիպերգում, Խրիմյանի «Հրափրակ երկրին աւետեաց» և «Հրափրակ Արարատեան» երկերում): Նախաբանի կամ նախադրության մեջ տվյալ բաժնի բովանդակությունը և վերջինիս բացատրությունը ներկայացնելու սովորույթը գալիս է դեռևս Աստվածաշնչի նախադրություններից: Նշենք նաև, որ նախադրությունը հնում ունեցել է և՛ նկարագրական՝ բովանդակությունը պատմող, և՛ մեկնողական բնույթ:

Անտիկ աշխարհից սկսած՝ գեղարվեստական ստեղծագործության հեղինակները, որպես կանոն, երկը սկսելիս դիմում էին մուսային: Վանանդեցին ևս պոեմի սկզբում ասում է.

Յադինական ինձ արդ յափանց սիւզ սթափիչ յորդահունչ,
դիր հեշտագին հոգիս ազդեաց նոր յերգ պարգել զիմ զշունչ³:

Այս տողերով ցանկանում է ասել, որ իրեն դրախտի սյուրն է որպես մուսա մղել գրելու այս ստեղծագործությունը, և դիմում է վերջինիս այնպես, ինչպես որ ժամանակին դիմում էին մուսային:

Մուսային ուղղված չափածո սկիզբների նման այստեղ հեղինակը դիմում է աղջուտ վիհում՝ խավար գբում գտնվող Լուսավորչին, որ լուսավորի իր միտքը առաջիկա ստեղծագործությունը գրելու համար:

Առաջին գլուխը, նախքան բուն գործողություններին անցնելը, սկսվում է պատկերավոր մուտքով, որում հեղինակը շեշտում է, որ խոսելու է «Հայաստանեայց Լուսարփիի» մասին.

Յաղջուտ վիէ ո՞ Լոյս անեղ, որ արարեր ի ըսկզբբան,
լոյս զգգալի համատարած յէիցդ ի ջահ մետուղփեան.
արփիացո ի գունս գամ և ի հոգւոյս յազդարան,
Հայաստանեայց զԼուսարփին պայծառս ի սոյն երգել բան⁴:

³ Վանանդեցի Յ., Արփիական Հայաստանի, Կ. Պոլիս, տպ. Պողոս Արապյան Ապուշեխոցու, 1836, էջ 1:

⁴ Նույն տեղում, էջ 2:

Կլասիցիզմին բնորոշ առանձնահատկությամբ պոեմում զգալիորեն շատ են երկարաբանությունները և ծավալուն նկարագրությունները, այսինքն՝ գեղարվեստականության վրա ազդող մի շարք գործոններ: Սուրբ Գրիգորի քարոզչական գործունեության մանրամասնությունները և չափածոյի վերածված վարդապետությունը ամբողջությամբ պոեմում ներառելը բավականաչափ թուլացրել է ստեղծագործության գեղարվեստական կողմը: Այս և մի շարք այլ թերություններ ազդում են ստեղծագործության վրա՝ խախտելով երկի՝ իբրև գեղարվեստական ամբողջականության պատկերացումը և ընկալումը:

Վանանդեցու առանց այն էլ ծանր, պաթետիկ, վերամբարձ գրաբարն ավելի է ծանրանում, երբ Ազաթանգեղոսի պատմությունից փորձում է հեռանալ՝ տեղ տալով երևակայությանը: Այնուհանդերձ, կարող ենք նշել, որ այս ստեղծագործության դրական կողմերից մեկն էլ այն է, որ հեղինակը պոեմի տողերում արժևորում, գովաբանում է հայ հին պատմագրությունն ու պատմական այն իրադարձությունները, որ տեղ են գտել գրվածքում: Դա էլ, անշուշտ, պայմանավորված էր կլասիցիզմի պատմահայեցողությամբ և թելադրանքով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԼԱՍԻՑԻԶՄԻ ՊԱՏՄԱՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՍԵՂԾԱԿԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
(«ՏԵՍԱՐԱՆ ՀԱՆԴԻՍԱՅՆ ՀԱՅԿԱՅ, ԱՐԱՄԱՅ ԵՎ ԱՐԱՅԻ», «ՈՍԿԻ ԴԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ»)

Երկրորդ գլուխը նվիրված է բանաստեղծի համանուն ստեղծագործություններին՝ գիտական խնդիր դնելով ներկայացնելու Վանանդեցու, առհասարակ հայկական կլասիցիզմի պատմահայեցողությունը, դրա աշխարհայացքային ու գաղափարական բնորոշումները, դրանց գեղարվեստական իրացումներն այս գործերում:

Ցույց է տրվում նաև, թե Վանանդեցին ստեղծագործաբար ինչպես է օգտագործել իր սկզբնաղբյուրները՝ դրանք ներկայացնելով համահունչ 19-րդ դարի սկզբի գրական, գեղագիտական ու աշխարհայացքային ըմբռնումներին: Ընդգծվում է նաև այն, որ սկզբնաղբյուրները պարզապես գեղարվեստորեն չեն վերարտադրվել և բանաստեղծական տողատման չէ, որ ենթարկվել են, այլ ստեղծվել են նորովի կերպարներ՝ ըստ նոր շրջանի գրականությանը բնորոշ հոգեբանական հատկանիշների:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և «Ծննդոց գրքի»՝ աշտարակաշինությանը նվիրված բաժինը համեմատվել են Վանանդեցու ստեղծագործությունների համապատասխան բաժինների հետ, և ցույց է տրվում, թե դրանք ինչ գեղարվեստական մշակման են ենթարկվել:

Աշխատանքում մեր առջև խնդիրն ենք դրել պոեմի պատմագրական սկզբնաղբյուրներն ուսումնասիրելուց զատ ցույց տալ, որ, ի տարբերություն հին

շրջանի ստեղծագործությունների, Վանանդեցու մեծածավալ պոեմներում կարևորվում է կերպարների հոգեբանական դրաման՝ ըստ նոր շրջանի գրականությանը բնորոշ հատկանիշների:

Անդրադարձ է կատարվել նաև այն հանգամանքին, որ թեև Վանանդեցին իր երկու պոեմների նյութ է դարձրել հեթանոսական շրջանի դեպքերը, այնուամենայնիվ, որպես քրիստոնյա հեղինակ, անդադար չէշտում է հայ ժողովրդի նախնիների՝ միաստվածության հավատի հետևորդ լինելը:

«Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» պոեմում ներկայացված են հայ ժողովրդի պատմության վաղ շրջանը, անցյալի փառքը, հերոսները: Դրվատվում են նախնիների քաջությունն ու առաքինությունը: Վանանդեցին հայկական կլասիցիզմի պատմահայեցողության հետևողությամբ իր իդեալը փնտրում էր հայ ժողովրդի հերոսական անցյալի մեջ: Նա չափածո ձևի մեջ ստեղծագործության նյութ է դարձնում հայոց նահապետների հետ կապված հերոսական անցյալը՝ վկայակոչելով առասպելական դյուցազուններին: Բայցևայնպես Վանանդեցու նպատակը մեր պատմության հին շրջանի դեպքերը սոսկ չափածոյի վերածելը չի եղել: Նա փորձել է գրել հերոսական պատմություն՝ ժամանակակիցների շրջանում հետաքրքրություն ու ոգևորություն առաջացնելով նախնիների սխրանքների ու քաջագործությունների հանդեպ:

«Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» պոեմը բաղկացած է չորս երգից: Յուրաքանչյուր երգ էլ իր հերթին՝ առանձին գլուխներից, գլուխների ընդհանուր թիվը տասնյոթն է:

Վանանդեցին շարադրանքն սկսել է մեր ժողովրդի նախահայր Հայկի ծնունդից, անդրադարձել ջրհեղեղին, աշտարակաշինությանը, Հայկի ապստամբությանը, ապա մեծ ոգևորությամբ պատկերել պատերազմի ու Հայկի հաղթության տեսարանը, Հայկի միապետությունը, աշխարհաշինությունն ու մահը, այնուհետև ոչ պակաս խանդավառությամբ ներկայացրել Արամի, այնուհետև Արայի ինքնակալության, Շամիրամի և Արայի հակամարտության, վերջինիս մահվան՝ պատմությունից հայտնի դրվագները: Պոեմի վերջին գլուխը վերնագրված է «Յորդոր նմանիլ նախնեաց», որտեղ հեղինակը խտացրել է իր ժամանակի հետ կապվող բուն ասելիքը:

Այս ստեղծագործությունը գրվել է Արսեն Բագրատունու «Հայկ դիւցազն» դյուցազներգությունից առաջ, որը հայկական կլասիցիզմի բարձրագույն արտահայտությունն է, և Բագրատունին կարող էր ծանոթ լինել Վանանդեցու պոեմի ձեռագիր տարբերակին: Այս առիթով նկատենք, որ Վանանդեցու պոեմների թողած ազդեցությունը և ունեցած գործառնական նշանակությունը պետք է հաշվել ոչ թե տպագրության թվականից, այլ գրության, որովհետև դրանք ձեռագրային ընդօրինակություններով տարածվել են:

Պոեմի վերնագրից երևում է, որ հեղինակը հետևել է պատմահայր Խորենացու խոսքին, թե «Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան –

Հայկ, Արամ, Տիգրան»⁵: Վանանդեցին ուստի ծննդաբանությանը հետևելու փոխարեն այս երեք նշանակալից դեմքերին է առանձնացրել Խորենացու հետևողությամբ: Հայկը և Արամը մեր ժողովրդի հիմնադիր նախահայրերն են համարվում, իսկ Արայի շուրջ հյուսված զրույցները և նրա մասին պատմվող ավանդությունները տարբեր դարերում լայն ժողովրդականություն են ունեցել՝ որպես մեռնող և հարություն առնող աստվածության խորհրդանիշ, քանի որ կապվել է մեռնող և հարություն առնող աստվածության պաշտամունքի հետ⁶:

Հատկանշական է, որ պոեմի առաջին երգի բնաբանը հեղինակը վերցրել է Սողոմոնի Իմաստության գրքից: Բնաբանը կանխորոշում է գաղափարական ուղղվածությունը, որ իմաստությունը գենք է թշնամիների դեմ, դեպի բարին է առաջնորդում, և նրա զորությունը աստվածապաշտությունն է՝

Հովհաննես Վանանդեցին, կլասիցիզմի հետևողությամբ, տիրապետելով հայ բանաստեղծական արվեստի օրինաչափություններին, տաղաչափությանը, հետամուտ կիսակործան հայրենիքը փրկելու, նորոգելու հայոց անօրինակ մաքառումներին, իր իդեալը փնտրում էր Հին Հայաստանի անցյալի հերոսների մեջ:

Ազգի վերաշինության գլխավոր ճանապարհը, ըստ հեղինակի, նախնիների ուղով ընթանալն է, վկայակոչելով հայ ժողովրդի նախնիներին՝ Վանանդեցին ուղիղ հաղորդություն է ստեղծում աշխարհաստեղծ ժամանակների հետ: Վանանդեցու համար գոյություն ունի ազգի փրկության միայն մի ճանապարհ. այն է՝ հայացքն ուղղել նախնիներին, որ, անշահախնդրորեն ու անձնուրաց կերպով սիրելով հայրենիքը, ծաղկեցրել ու զորացրել են այն: Ամենայն ճշմարիտը նրանց նախասահմանած ճանապարհով ընթանալն է, ուստի, հակադրություն ստեղծելով հայոց ծաղկուն ու հերոսական անցյալի և իր դժնդակ ժամանակի միջև, Վանանդեցին հայոց դյուցազունների օրինակով կոչ է անում լծվել ազգի վերաշինության գործին, որի հիմքը նախևառաջ հայրենասիրությունն ու ազգաճանաչությունն են:

Սույն գլխի երկրորդ հատվածում անդրադարձ է կատարվում հեղինակի «Ոսկի դար Հայաստանի» պոեմին: Այս պոեմը Վանանդեցու ստեղծագործություններից միակն է, որ բացարձակապես սյուժե չունի. սյուժետային զարգացում չկա: Դեպքերի թվարկում է՝ որոշակի համակարգմամբ և ներբողական ոճով: Հեղինակը ստեղծել է Խորենացու և մյուս պատմիչների, ինչպես նաև Հ. Մ. Չամչյանի և Հ. Ղ. Ինճիճյանի գործերի հիման վրա Հայոց պատմության չափածո համապատում ու համահավաք պատմություն և

⁵ **Մովսես Խորենացի**, Պատմութիւն հայոց, քննական բնագիրը՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները՝ Ստ. Մալխասյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 100:

⁶ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ա, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1966, էջ 65-68:

⁷ Տե՛ս **Վանանդեցի Յ.**, Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի, Զմիտնիա, տպ. Տետեյան եղբ., 1856, էջը համարակալված չէ:

շարադրել: Ավելին, Խորենացու և մյուս պատմիչների մոտ եթե այդ դեպքերը պատմվում են որոշակի սյուժետային զարգացմամբ, ապա այստեղ այն ևս հստակ չի արտահայտվում, համակարգված չի ներկայացվում, և մնացել է միայն դեպքերի ներբողական կողմը:

Բուն գրվածքը հեղինակը բաժանել է չորս մասի, որոնք անվանել է երգեր:

Առաջին երգի բնաբանն է. «Դու Տեր յարուսցեալ գթասցիս ի վերայ Սիօնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ: Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա, և ի հողս նորա գթասցին»⁸: Սաղմոսաց գրքից վերցված այս բնաբանը (Սաղմոս ՃԱ) ոչ միայն կրոնական, այլև ազգային խորհուրդ ունի, որովհետև այդ խոսքով հեղինակն ակնարկում է, թե եկել է Տիրոջ՝ Հայաստանի վրա՝ Սիօնի պես գթալու ժամանակը:

Առաջին երգի սկզբում Վանանդեցին վկայակոչում է Սահակ Բագրատունուն, որը Մովսես Խորենացուն հորդորում է գրել Ոսկի դարի մասին, և պատմահայրը սկսում է պատմել, նկարագրում է մեր նախնիների կյանքը, բնությունը, համառոտ անդրադառնում Արարչագործությանը և մանրամասն խոսում ջրհեղեղի մասին: Հանդիպում ենք նաև ջրհեղեղի հետ կապված տեղանվանական բնույթի ստուգաբանական ավանդությունների: Այս հատվածը գրական հետևողություն է Խորենացու «Հայոց պատմությանը»:

Հայաստանի նկարագրությունը և Հայ երկրի ներդաշնակությունը հեղինակը սկսում է երգել «բարեբաստիկ» բնորոշմամբ, որի հիմքում ընկած է «բարի», «բարեբեր» բառը.

Բարեբաստիկ էր Հայաստան բաբէ փառացն երկնածիր⁹:

Ներբողված ոսկե դարը որևէ ներքին հակասություն չունի: Ամենուր ներդաշնակ հարաբերություններ են:

Հեղինակը պոեմում, հետևելով կլասիցիստական ըմբռնումներին, Հին Հայաստանը ներկայացնում է որպես մի ներդաշնակ վայր, աստվածատունկ դրախտ, որտեղ ամեն ինչ իդեալական է, հայրենիքն ու ժողովուրդն անցյալում ներկայանում են որպես լավագույն օրինակ քաջության, ազնվության, բարեշինության:

Երկրորդ երգում Վանանդեցին խոսում է արվեստների ու երկրագործության մասին, ապա անդրադառնում Հայկ Նահապետին, նկարագրում նրա՝ Հայաստան գալը, Բելի դեմ կռիվը և այլ մանրամասներ:

Վանանդեցու պոեմում այնքան ներդաշնակ է նկարագրված ժամանակաշրջանը, որ անգամ ազահությունը չէր կեղեքում արքաներին.

Եւ ոչ գրգիռ ազահութեան կեղեքաբեր տկարաց¹⁰:

⁸ Վանանդեցի Յ., Ոսկի դար Հայաստանի, Զմյուռնիա, տպ. Յուսումնարանի Սրբոյն Մեսրոպայ, 1841, էջ 1:

⁹ Նույն տեղում, էջ 6:

¹⁰ Նույն տեղում, էջ 107:

Երրորդ երգը հեղինակն սկսում է Արամից, խոսում վաճառականության մասին, ապա անդրադառնում Արշակունիների ու Բագրատունիների հետ կապված պատմական անցքերին և համառոտ շարադրանքով հայ ժողովրդի պատմությունը հասցնում մինչև ռուսաց տիրապետությունը:

Վերջին՝ չորրորդ երգում Վանանդեցին մեկ անգամ ևս խոսում է դրախտի մասին, հիացմունքով նկարագրում վերջինիս բնությունը, ապա փորձում է ապացուցել, որ դրախտը Հայաստանի տարածքում է եղել, Ադամն ու Եվան էլ խոսել են հայերեն:

Վանանդեցին ևս, ինչպես ժամանակաշրջանի շատ այլ հեղինակներ, այն գաղափարի կրողն էր, ըստ որի՝ դրախտը գտնվել է Հայաստանում, մարդկության նախածնողներ Ադամն ու Եվան էլ խոսել են հայերեն, և «Ոսկի դար Հայաստանի» ստեղծագործության, ինչպես նաև «Առ Հայաստան» բանաստեղծության մեջ նա փորձել է հնարավորինս հիմնավորել այդ դրույթը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀՈԳԵՎՈՐ-ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ
(«ՃԱՌ ՆԵՐԲՈՂԱԿԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱԶՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ
ԱՌԱՍԱՑՈՒԹԻՒՆ Ի ՍՈՒՐԲ ՆՇԱՆՆ ՎԱՐԱԳԱՅ», «ԿԵՐԱԿՈՒՐ
ՔԱՀԱՆԱՅԻՑ»)

Ատենախոսության երրորդ գլխում, որ կոչվում է ՀՈԳԵՎՈՐ-ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ («ՃԱՌ ՆԵՐԲՈՂԱԿԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱԶՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՍԱՑՈՒԹԻՒՆ Ի ՍՈՒՐԲ ՆՇԱՆՆ ՎԱՐԱԳԱՅ», «ԿԵՐԱԿՈՒՐ ՔԱՀԱՆԱՅԻՑ»), ըստ վերնագրի հայեցության, խոսել ենք Հովհաննես Վանանդեցու հոգևոր-կրոնական գործերի մասին:

Մտեր Մտերյանը 1853 թ.՝ Վանանդեցու մահից տասներեք տարի անց, Մոսկվայում հրատարակել է իր սիրելի ուսուցչի «Ճառ ներբողական ի սուրբ Խաչն Քրիստոսի և պատմագրական առասացութիւն ի Սուրբ Նշանն Վարագայ» գրքույկը:

«Վարագա խաչի գրական մշակումը» ենթազբխում անդրադարձ ենք կատարել այս գործին: Վանանդեցին այն գրել էր 1815-1816 թթ.: Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, սա կես քնարական, կես վիպական ներբող է՝ նման նույնաբովանդակ հին երկերին, լի մեկնաբանման բացատրություններով¹¹: Այն, իրավամբ, կրոնական ներբող է՝ գրված Վարագավանքի սպասավոր Սարգիս վարդապետի խնդրանքով, ու նվիրված է Վարագավանքին և Քրիստոսի Խաչափայտին: Ստեղծագործության մեջ նկարագրվում է վանքի կառուցման պատճառ դարձած տեսիլքը, փառաբանվում է հայոց հավատը, նրա դերը մեր ժողովրդի կյանքում:

¹¹ Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հ. 7, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 593:

Աշխատանքում վեր են հանված այս գործի գրական սկզբնաղբյուրները և դրանց ստեղծագործաբար օգտագործումը:

Վանանդեցու Ներբողը կրոնական գրվածք է, և թեև առանձին հատվածներ կարելի է համարել հաջողված, այնուամենայնիվ այն ավելի շատ գրապատմական արժեք ունի, և կարելի է համարել հայ միջնադարյան գրականության ավանդների շարունակությունը նոր շրջանի հայ դասական գրականության մեջ՝ Վարազա Սուրբ Խաչին նվիրված գործերի շրջանակում:

Վանանդեցու Ներբողը սյուժետային թույլ գիծ ունի: Ավելին, ոչ թե սյուժետային ընթացք ունի, այլ իրադարձությունների զարգացման դրվագները գեղարվեստորեն ներկայացնելու փոխարեն ներբողվում է Վարազա Խաչի՝ միջնադարից եկող պատմության դիպաշարային յուրաքանչյուր դրվագը: Այս պատճառով, եթե Վարազա Խաչի պատմությունը ընթերցողը չիմանա, չի ընկալի, թե ինչի մասին է գրում Վանանդեցին:

Ի տարբերություն հեղինակի մեծածավալ պոեմների՝ այս ստեղծագործության լեզուն մատչելի է, ոճը՝ պարզ: Վանանդեցու ոճին ու լեզվամտածողությանը բնորոշ երկարաշունչ բառեր ու արտահայտություններ ևս այստեղ սակավ են հանդիպում: Պատճառն առավելապես այն է, որ Վարազա Խաչին նվիրված ստեղծագործությունները հիմնականում ուշ միջնադարում են գրվել՝ պարզ ու հասկանալի լեզվով, իսկ եթե հաշվի առնենք այն, որ հեղինակը քաջածանոթ է եղել այդ գրվածքներին, պարզ է դառնում, որ սկզբնաղբյուրը այս դեպքում նույնպես ազդել է ստեղծագործության վրա: Այնպես որ, գրական հետևողությունը նպաստել է լեզվի պարզությանը:

Վանանդեցու գրվածքը կազմված է երկու մասից՝ Քրիստոսի Խաչափայտին նվիրված փառաբանական հատվածից և Խաչափայտի մասունքը եղող Վարազա Խաչի պատմությունից:

Ստեղծագործությունը թեև չունի միասնական սյուժետային գիծ, բայց և այնպես նրանում ներկայացվում են Խաչափայտի ընդհանուր բնորոշումները՝ Հին և Նոր կտակարանների զուգահեռով, ապա՝ Վարազա Խաչը, ուստի, ինչպես ասացինք, այս ստեղծագործությունը ըմբռնելի և ընկալելի կարող է լինել միայն Վարազա Խաչի պատմությանը ծանոթ ընթերցողի համար:

Ստեղծագործության սկզբում Խաչափայտը զուգահեռի մեջ է դիտվում Հին և Նոր կտակարանների համաբնույթ հասկացությունների հետ: Այսպես, հեղինակը վկայակոչում է Նախահորը՝ տիեզերքի և երկրի առաջին բնակչին. «Զարթի՛ր դու, Ադամ, անդրանիկ յայսմ տիեզերքի, ձեռն կարկառել յայս Քրիստոսազարդ գեղեցիկ ծառոյ ի պտուղ կենաց և լի՛ց գարտիդ եռանդեան փափաք յՍտուածութեանն հասեալ պատիւ առանց երկկանաց»¹²: Ապա՝ նախամայր Եվային, Աբրահամին, Իսահակին և այլոց: Հեղինակը

¹² **Վանանդեցի Յ.**, Ճատ ներբողական ի սուրբ Խաչն Քրիստոսի և պատմագրական առասացութիւն ի Սուրբ Նշանն Վարազայ, Մոսկվա, տպ. Լազարյան ճեմարանի, 1853, էջ 38:

միջնադարյան գրականության ավանդույթի հետևողությամբ Քրիստոսին ներկայացնում է որպես երկրորդ Ադամ: Այսինքն՝ Ադամի և Եվայի գործած մեղքից՝ արգելված պտղի ճաշակումից հետո Աստված վտարեց մարդուն դրախտից, մինչդեռ Քրիստոս, Խաչափայտը ելնելով, շնորհեց փրկություն ու կյանք: Դարձյալ մեկնաբանական ընդունված ավանդույթով Վանանդեցին դրախտի ծառին հակադրում է Քրիստոսի Խաչափայտը: Կենաց ծառի պտուղը ճաշակելուց հետո Աստված վտարեց մարդուն դրախտից, իսկ Միածին Որդու Խաչափայտով վերստին ծնվելու հնարավորություն ընձեռեց ու շնորհեց հավիտենական կյանք:

Հաստատվածները հիմնականում ներբողվում են՝ տեղ-տեղ պատմվելով՝ համեմված Վանանդեցու հուզառատ ու սրտաբուխ նկարագրություններով: Սյուժեն թույլ է արտահայտված, որովհետև այս ստեղծագործությունը ներբող է: Այսինքն, փառաբանվում է այն, ինչ տեղի է ունեցել:

Վանանդեցու «Ճառ ներբողական ի սուրբ Խաչն Քրիստոսի և պատմագրական առասացութիւն ի Սուրբ Նշանն Վարագայ» ստեղծագործությունը իր ուրույն տեղն ունի Վարագա Սուրբ Նշանին նվիրված մնացյալ ստեղծագործությունների կողքին՝ որպես Խաչի ներբող, ուր տրված են Խաչի ընդհանուր միջնադարյան բնորոշումները: Այն ժամանակին մեծ տարածում է գտել և այսօր էլ, իրապես, կարող է հետաքրքրություն ներկայացնել Քրիստոսի Խաչափայտին նվիրված փառաբանական հաստատվածների, ավելի քան գրավիչ, պատկերավոր ու խոսուն դրվագների, յուրահատուկ շարադրանքի և Վանանդեցու ոճին այնքան բնորոշ զգացմունքայնության ու հուզականության շնորհիվ:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում անդրադարձ է կատարվել **Վանանդեցու կրոնագիտական աշխատությանը:**

Հովհաննես Վանանդեցին Ջմյունիայի Մեսրոպյան վարժարանում տասնութ ու կես տարի ուսուցչություն անելուց հետո՝ 1822 թ., տեղի վերատեսուչ Փիլիպպոս արքեպիսկոպոսի հրամանով ձեռնադրվել է սարկավագ, ապա քահանայի աստիճան ստացել և Ստեփանոս արքեպիսկոպոսի հորդորով մի առանձին գրքով, որ կոչվում է «Կերակուր քահանայից» (այսինքն՝ հոգևոր սնունդ քահանաների համար), բացատրել քահանաների պարտականությունները¹³:

Այս գիրքը ժամանակին մեծ տարածում է ունեցել և ընդօրինակվել է թե՛ իր ժամանակակից, թե՛ հետագա գրիչների կողմից: Անգամ Վանանդեցին է մի քանի անգամ այն ընդօրինակել, որը վկայում է գրքի ունեցած մեծ պահանջարկի մասին:

«Կերակուր քահանայից» երկի հիմքում ընկած է կաթոլիկ եկեղեցու նշանավոր գործիչ Հովհաննես Բոնա (Յովհաննես Պօնա) կարդինալի գործը:

¹³ Տե՛ս **Կանայեանց Ստ.**, Տուցակ հայերէն ձեռագրների Թիֆլիզի Ներսիսեան հոգևոր դպրանոցի, Թիֆլիզ, Մ. Շարաձեի տպարան, 1893, էջ 26:

«Կերակուր քահանայից» երկը 1760 թ. հրատարակվել է Վենետիկում՝ Անտոնի Բորթոլիի տպարանում, տեր Աստվածատուր Ջուլայեցու կողմից (վերջինս նույնացված է Աստվածատուր Բաբիկյանի հետ¹⁴):

1841 և 1858 թթ. «Կերակուր քահանայիցը» հրատարակվել է Ս. Էջմիածնում:

Վանանդեցու խմբագրած տարբերակը բաղկացած է ընծայաբերությունից, «Յաղագս պատույ քահանայից» հատվածից, տասնութ (ժը) գլուխներից, չորս պրակներից: Գիրքը եզրափակվում է «Առ ազդեցութիւն հեղինակին առանց ինչ յաւելման» վերնագիրը կրող ազդեցիկ հատվածով, որտեղ կոչ է արվում քահանաներին ապրել մաքրագույն կյանքով, լինել ճշմարիտ, առաքինի օրինակ ժողովրդի համար, մնալ իրենց կոչմանը հավատարիմ, երբեք չորանալ այն բանական զոհը, որ կատարեց Փրկիչը Իր հոտի համար. «Ծանի՛ր ապա զվիճակ քո մաքրագոյն, թէ յո՞րպիսի պատիւ ճոխացար, զի զոր կոյսն երանեալ ամենաստոյբ մայրն Մարիամ մի անգամ ևեթ ծնաւ, դու ինքն քանիցս անգամ եւ պատարագես, բանիւ զնոյն կատարես, իբրև 'ի սեղանոյ վայելես, եւ տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի մարմնովն եւ արեամբ կերակրիս»¹⁵:

«Կերակուր քահանայից» երկի՝ Վանանդեցու խմբագրած տարբերակը, որ 1760 թ. հրատարակության հետ համընկնում է գլխաբաժանմամբ և վերնագրերով ու հարմարեցված է արդեն իր ժամանակի պահանջներին, ժամանակի լայն տարածում գտած երկերից մեկն է, որ, գրված լինելով գեղեցիկ և ականջահաճո գրաբարով, ստեղծագործաբար զարգացրեց հայ կրոնախրատական գրականության ավանդները:

Երրորդ գլխում անդրադարձել ենք նաև «Արփիական Հայաստանի» պոեմի՝ Լուսավորչի վարդապետությունն ընդգրկող հատվածին, որտեղ հեղինակը Ագաթանգեղոսի հետևողությամբ Սուրբ Գրիգորի բերանով անդրադառնում է աստվածաշնչյան բոլոր առանցքային հատվածներին՝ սկսելով Արարչագործությունից, թե ինչպես ամենագոր Աստված արարեց մարդուն՝ տալով նրան իշխանություն երկրի վրա, խոսելով առաջին մարդու՝ Ադամի մասին, հիշատակելով Մովսեսին, թե ինչպես նա խրայելացիներին դուրս բերեց գերությունից, այնուհետև շեշտելով Հիսուս Քրիստոսի՝ մարդկության Փրկչի առաքելությունը երկրի վրա՝ ներկայացնելով Նրա ծնունդը, մկրտությունը, Նրա կողմից կատարված մեծ հրաշքները, խաչելությունը, թաղումը, հարություն առնելը, այնուհետև պատմելով նաև առաքյալների ու նրանց կատարած գործերի ու հրաշագործությունների մասին:

¹⁴ Տե՛ս Անասյան Հ., Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., հ. 9, Երևան, «Զանգակ» հրատ., 2004, էջ 96:

¹⁵ Վանանդեցի Յ., Կերակուր քահանայից, Էջմիածին, տպ. Ս. Էջմիածնի, 1858, էջ 112:

Գրիգոր Լուսավորչի վարդապետության հիմքերը պոեմում թերևս չարչարանքների տեսարաններում կարելի է փնտրել, երբ նրա և Տրդատ թագավորի միջև, այսպես կոչված, գաղափարական վիճաբանություն է սկսվում: Որպես նվիրյալ՝ Սուրբ Գրիգորը պոեմի տողերում ամեն գնով պաշտպանում է իր հավատքի սկզբունքները և համարձակ հակադարձում արքային:

Ատենախոսության մեջ պոեմի՝ Լուսավորչի վարդապետությունն ընդգրկող հատվածը դիտարկել ենք պոեմից դուրս՝ որպես առանձին ստեղծագործություն՝ այն քննելով որպես աստվածաբանական մեկնություն:

ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական ժառանգությունը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Հովհաննես Վանանդեցին, տիրապետելով հայ բանաստեղծական արվեստի օրինաչափություններին, տաղաչափությանը, կլասիցիզմի հետևողությամբ հետամուտ կիսակործան հայրենիքը փրկելու, նորոգելու հայոց անօրինակ մաքառումներին, իր իդեալը փնտրում էր Հին Հայաստանի անցյալի հերոսների մեջ: Ազգի վերաշինության գլխավոր ճանապարհը, ըստ Վանանդեցու, նախնիների ուղով ընթանալն է, և հենց հայրենիքը հնոց ավանդույթով «նորոգելու» պատմամշակութային այս հանձնառությամբ է, որ նրա գլխավոր ստեղծագործություններում վերհանված են մեր նախնիների ֆիզիկական և հոգևոր արժանիքները: Վկայակոչելով հայ ժողովրդի նախնիներին՝ Վանանդեցին ուղիղ հաղորդություն է ստեղծում աշխարհաստեղծ ժամանակների հետ:

2. Վանանդեցու նպատակը մեր պատմության հին շրջանի դեպքերը սուկ չափածոյի վերածելը չի եղել: Նա փորձել է պահել ազգային իդեալների, հայրենյաց տեսլականի փոխանցականության, ուժի, հավատքի, հայրենասիրության ժառանգորդական կապը, գրել հերոսական պատմություններ՝ ժամանակակիցների շրջանում հետաքրքրություն ու ոգևորություն առաջացնելով նախնիների սխրանքների ու քաջագործությունների հանդեպ: Հեղինակն իր պոեմներում արժևորում, գովաբանում է հայ հին պատմագրությունն ու պատմական այն իրադարձությունները, որ տեղ են գտել գրվածքներում:

3. Վանանդեցու համար՝ որպես նոր շրջանի հեղինակի, իբրև ստեղծագործական առանձնահատկություն է դիտարկվում հերոսների անհատականության շեշտադրումը, կարևորվում է հոգեբանական դրաման, հերոսական և ուժեղ անհատների կերպարների ստեղծումը և այդ ամենը գեղարվեստական հուզականությամբ ներկայացնելը՝ ըստ նոր շրջանի գրականությանը բնորոշ հատկանիշների:

4. Վանանդեցու երեք մեծ պոեմները պայմանականորեն կարելի է պոեմ անվանել, որովհետև վիպական ընթացք, սյուժետային զարգացում և

կերպարներ, ըստ էության, չունեն: Գրականագիտությունը հակված է, մենք էլ հիմնավորում ենք, թե որանք առավել ճիշտ է անվանել ներբողներ, որոնցում, ըստ կլսիցիզմի գեղագիտության, ներբողվում են տվյալ ժամանակը և պատմական անձնավորությունները:

5. Վանանդեցին՝ որպես քրիստոնյա հեղինակ, իր գրվածքներում անդադար շեշտում է մեր նախնիների՝ Նոյի հաբեթյան ճյուղի շարունակողների միաստվածության հավատի հետևորդ լինելը, ինչը ստեղծագործության գրության ժամանակաշրջանին և պատմական այդ շրջափուլի աշխարհայեցությանը բնորոշ գիծ էր:

6. Հեղինակն իր ստեղծագործություններում, հետևելով կլասիցիստական գաղափարախոսությանը, Հին Հայաստանը ներկայացնում է որպես աշխարհի ժողովուրդների նախահայրենիք, աստվածատուն կ դրախտ, տապանի իջման տեղ, որ մշտապես ենթակա է եղել ու լինելու է Աստծո խնամքին և հոգածությանը: Գրական բնագիրը գերծ է սոցիալական հարցադրումներից, հայրենիքն ու ժողովուրդը, որ անցյալում ավելի մոտ էին Աստծուն, ներկայանում են որպես լավագույն օրինակ քաջության, ազնվության, բարեշինության:

7. Հայ ժողովրդի անցյալի ու ներկայի մասին խորհրդածելիս անճանաչելիորեն փոխվում է Վանանդեցու լեզուն: Անցյալի մատենագրական ավանդույթը դեպ Ոսկեդարը միտող ծանր գրաբար էր թելադրում, և այս նախընտրությունը սկզբունքային էր այն առումով, որ բարձր ու վեհ, աստվածային ժամանակների մասին պիտի խոսվեր աստվածների լեզվով: Անմշակ, չնորմավորված աշխարհաբարը, որ լի էր օտարաբանություններով ու կոշտ ռամկաբանությամբ, Վանանդեցու աշխարհայացքում նույնական էր դժխեմ ժամանակների ու տրոհված մտածողության հետ: Իր գործադրած բարձր ու վեհ լեզուն կրկին մի հեռավոր ժամանակի հետ համեմատում էր իր օրերի անփառունակ ներկան, նաև՝ անցյալ ժամանակի մտածողությունը, կյուրիտն էր ներկայացնում, և ուրիշ կերպ դա հնարավոր չէր անել, քան գրաբարով:

8. Վանանդեցու կրոնական գրվածքները, որ հարմարեցված են 19-րդ դարասկզբի, վաղ կլասիցիզմի պահանջներին ու լայն տարածում են գտել, գրված լինելով գեղեցիկ և ականջահաճո գրաբարով, ստեղծագործաբար զարգացրին հայ կրոնախրատական գրականության ավանդները՝ մի աստիճան վեր բարձրացնելով հայ հոգևոր մտքի ընկալումը:

9. Հովհաննես Միրզայան Վանանդեցու գրական ժառանգության համակողմանի ուսումնասիրությունը հետաքրքիր ընդհանացումների է հանգեցնում հայ հոգևոր մշակույթի, գրականության շարժման ընթացքի, գրապատմական մի շարք իրողությունների, կլասիցիզմի գրականության ազգային առանձնահատկությունների և այդ գրական ուղղության ազգային նպատակների վերաբերյալ:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ
ՇԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ.**

1. **Հովհաննես Միրզայան Վանանդեցու «Կերակուր քահանայից» գիրքը**, «Գիտական Արցախ», Երևան, 2019, N 1, էջ 343-349:
2. **«Դրախտ Հայաստանի» գեղարվեստական արտացոլումը Հովհաննես Վանանդեցու «Ոսկի դար Հայաստանի» պոեմում**, «Գրականագիտական հանդես», Երևան, 2019, N 2, էջ 34-43:
3. **Հովհաննես Միրզայան Վանանդեցու «Արփիական Հայաստանի» պոեմի պատմագրական սկզբնաղբյուրները**, «Հայագիտական հանդես», Երևան, 2020, N 2, էջ 65-80:
4. **Պատմական դեպքերի գեղարվեստական մարմնավորումը Հովհաննես Միրզայան Վանանդեցու «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» պոեմում**, «Գիտական Արցախ», Երևան, 2020, N 4, էջ 223-232:
5. **Հայոց դարձի պատմությունը Հովհաննես Վանանդեցու «Արփիական Հայաստանի» պոեմում**, «Հայագիտական հանդես», Երևան, 2021, N 3, էջ 61-77:
6. **Յովհաննէս Վանանդեցու «Ճառ ներբողական ի սուրբ Խաչն Քրիստոսի եւ պատմագրական առասացութիւն ի Սուրբ Նշանն Վարագայ» գրուածքը**, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2021, Ժ, էջ 52-62:
7. **Հայկ Նահապետի կերպարը Հովհաննես Վանանդեցու ստեղծագործություններում**, «Գիտական Արցախ», Երևան, 2022, N 3, էջ 167-175:

Сирануш Овиковна Парсаданян
Литературное наследие Ованеса Мирзаяна Ванандского

10.01.01.- Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности «Армянская средневековая и новая литература».

Защита состоится в 23 декабря 2022г., в 12:30, на заседании специализированного совета высшей аттестационной комиссии 003 по специальности «Литературоведение», действующего при Институте литературы имени М. Абегамяна НАН РА.

Адрес: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15.

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института литературы имени М. Абегамяна.

РЕЗЮМЕ

Диссертация представляет целостный анализ творчества одного из видных представителей армянского классицизма, деятеля культуры и поэта Ованеса Мирзаяна Ванандского (1772-1840).

Роль Ованеса Мирзаяна Ванандского в утверждении классицизма вообще в армянской литературе весьма велика. Идеальной основой важнейших произведений Ванандского является патриотизм и народолюбие и воспитание и обучение армянских юношей и девушек на базе этих идей.

Актуальность темы обусловлена, прежде всего, вновь проявляемым в последнее время большим интересом к системе ценностей, связанных с пониманием концепта Родины и патриотизма сквозь призму армянской истории, ее судьбоносных периодов, культуры, литературы. В этом смысле изучение литературы классицизма, ее эстетики, превнесенных ею идеалов и идей, а также литературного наследия одного из крупнейших представителей классицизма Ванандского, непосредственно связанного с этим мировоззрением, актуально сегодня с точки зрения изучения истории армянского классицизма.

Диссертация состоит из введения, трех глав, результаты исследования и теоретические выводы мы обобщили в Заключение. Как и положено в работе есть список использованной литературы.

Разделение на главы проводилось сообразно с представленными произведениями. Также был проведен структурный анализ, касающийся отдельных разделов каждого произведения:

Во введении представлены предмет диссертации, история вопроса, степень разработанности, обоснована структура работы, методологическая основа. Указываются актуальность и научная новизна. Также кратко

представлена биография и общая характеристика творчества Ованеса Ванандского.

Первая глава исследования, озаглавленная «Художественное воплощение армянского обращения» («АРПИЙСКАЯ АРМЕНИЯ»), рассматривает обширную поэму Ованеса Ванандского Арпийская Армения» (десять тысяч строк), написанную в 1829 году, но опубликованной только в 1836 году в Константинополе. В ходе исследования была сделана попытка понять, как оригинальные материалы из исторических источников были художественно отражены в объемной поэме Ванандского.

В связи с этим был затронут вопрос о том, какими библиографическими первоисточниками пользовался Ванандский при написании поэмы и как художественно представил их, для чего мы сравнили произведения соответствующих средневековых авторов и данные фрагменты произведения Ванандского. Таким образом удастся показать метод работы Ванандского с источниками и степень художественности. В этой главе приводятся библиографические строки соответствующими литературными источниками, из которых видно, в каком случае поэт выразил свои чувства и передал свое душевное состояние по отношению к описываемым событиям:

Вторая глава, озаглавленная «Поэтическое выражение историко-культурного наследия армянского классицизма («Описание событий, связанных с Айком, Арамом и Ара»)), обращается к одноименным произведениям поэта, поставив научную задачу представить историко-культурное наследие Ванандского, армянского классицизма в целом, его мировоззренческие и идеологические взгляды, их художественная реализация в этих произведениях. Также показано, как Ванандский творчески использовал первоисточники, показывая их согласно с понятиями литературно-эстетического мировоззрения начала 19 века.

Подчеркивается также то, что первоисточники не просто воспроизводились художественно и не подвергались поэтическим сносам, а создавались новые образы в соответствии с психологическими особенностями, присущими литературе нового периода.

Раздел, посвященный строительству башни, из книг Мовсеса Хоренаци «Армянская история» и «Книга Бытия», сравнивается с соответствующими разделами произведений Ванандского, и показывается, какой художественной обработке они подверглись:

В работе мы поставили перед собой задачу помимо изучения историографических источников поэмы показать, что, в отличие от произведений древнего периода, в крупных поэмах Ванандского подчеркивается психологическая драма персонажей по характеристикам, присущим литературе нового периода.

Было затронуто также и то обстоятельство, что, предки армянского народа являются последователями монотеизма, так как Ванандский использовал в качестве материала для двух своих поэм события языческого периода, хотя, несмотря на это, он, тем не менее, как христианский автор постоянно подчеркивает их поклонение единому Богу.

В третьей главе диссертации, которая называется «Духовно-религиозные произведения («Ода, посвященная Святому Кресту Христову и история ВАРАГСКОГО Креста согласно армянской историографии», «Духовная пища для священников»)» соответственно названию рассматривали духовно-религиозную деятельность Ованеса Ванандского. В третьей главе мы коснулись также той части поэмы «Арпикакан Айастани», которая относится к учению Григора Лусаворича, где автор вслед за Агатангелосом устами Святого Григория обращается ко всем ключевым библейским событиям.

В диссертации мы рассматривали часть поэмы, включающую учение Просветителя, вне поэмы, как отдельное произведение, рассматривая ее как богословскую интерпретацию.

В заключении обобщены основные результаты исследования.

Siranush Hovik Parsadanyan
The literary heritage of Hovhannes Vanandetsi

(Specialty Code: 10.01.01) - The summary of the dissertation for claiming the degree of Candidate of Philological Sciences in the specialization "Armenian medieval and new literature".

The defense of the thesis will be held on 23 December, in 2022, at 12:30 a.m. at the session of the meeting of the 003 Specialized Council of Literature studies at the Institute of Literature after M. Abegyan of the Supreme Certifying Commission of the Republic of Armenia.

Address: 0015, Yerevan, 15 Grigor Lusavorich str.

SUMMARY

The dissertation can be found on the website of the National Academy of Sciences of the Republic of Armenia and in the library of the Institute of Literature after M. Abegyan.

This dissertation is devoted to the general analysis of the works of one of the prominent representatives of the Armenian classicism - the cultural figure and poet Hovhannes Mirzayan Vanandetsi (1772-1840).

The role of Hovhannes Mirzayan Vanandetsi in establishing classicism in our country and in Armenian literature as a whole is quite enormous.

Patriotism and nation-careness are the ideological basis of the main works of Vanandetsi and the legacy of these ideas, the education and upbringing of Armenian young men and women in them.

The relevance of the topic is primarily due to the great interest that the value system associated with the Armenian history, its fateful cycles, the realization of the vision of the motherland through culture, literature and patriotism has recently reappeared again. In this sense, the study of the literature of classicism, its aesthetics, the ideals and ideas that it brought, the literary heritage of Vanandetsi, one of the largest representatives of the classicism, which is directly related to this mundane existence, is relevant today from the point of view of studying the history of the Armenian classicism.

The dissertation consists of an introduction, three chapters, the research results and theoretical conclusions are summarized in the conclusion. References are also attached.

The division of the chapters is done according to the main works. A structural analysis was also carried out concerning the individual sections of each work.

The introduction presents the subject of the dissertation, the history of the issue, the degree of its elaboration, the structure of the work, the methodological foundation is substantiated. The relevance and the novelty of the dissertation is also mentioned.

The first chapter of the study, entitled the Artistic embodiment of the Armenian conversion ("ARPIAN ARMENIA"), examines Hovhannes Vanandetsi's extensive poem "Arpian Armenia" (ten thousand lines), written in 1829, but it was published only in 1836 in Constantinople. During the investigation we tried to find out how the bibliographical material of the historians was revealed in Vanandetsi's poem. In this regard, the question was raised about which bibliographic primary sources Vanandetsi used when writing the poem and how artistically he presented them, for which we compared the works of the corresponding medieval authors and these fragments of Vanandetsi's work.

In this chapter, the lines of the original work are cited together with a literary source, which makes clear where the poet expressed his feelings and state of mind in the relation to the events described:

The second chapter, entitled Poetic expression of the historical and cultural heritage of the Armenian classicism ("The description of events related to Hayk, Aram and Ara"), refers to the poet's works of the same title, setting a scientific task to present the historical and cultural heritage of Vanandetsi, Armenian classicism in general, its ideological and mental definitions, their artistic realizations in these works.

It is also emphasized that the primary sources were simply not reproduced artistically and were not subjected to poetic footnotes, but new images were created in accordance with the psychological characteristics inherent in the literature of the new period.

The section dedicated to the tower construction of Movses Khorenatsi's books "Armenian history" and "The Book of Genesis" was compared with the corresponding sections of Vanandetsi's works, and it is shown what artistic treatment they underwent:

One of the tasks of this work was in addition to studying the historiographical sources of the poem, to show that, unlike the works of the ancient period, the large-scale poems of Vanandetsi emphasize the psychological drama of the characters according to the characteristics inherent in the literature of the new period.

It is also mentioned that, despite the fact that Vanandetsi made the events of the pagan period the materials of his two poems, nevertheless, as a Christian author, he constantly emphasizes that the ancestors of the Armenian people were followers of the monotheism:

In the third chapter of the dissertation, which is called Spiritual and religious works ("ODE dedicated to the Holy Cross of Christ and the history of the

VARAG Cross according to the Armenian historiography", "Spiritual food for priests"), in the accordance with the title, we discuss the spiritual and religious affairs of Hovhannes Vanandetsi. In the third chapter, we also touched on the part of the poem "Arpiakan Hayastan", covering the teachings of Grigor Lusavorichi", where the author, following Agathangelos, by St. Gregory's words, addresses all the main biblical episodes. In the dissertation, we considered the part of the poem that includes the teachings of the Enlightener, outside of the poem as a separate work, considering it as a theological interpretation.

In the conclusion, the main results of the study are summarized.